



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/123/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

25 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 25-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տիգրան Ռոբերտի Թադևոսյանի ընտանիքի անդամ Տարոն Թադևոսյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/123/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով Տիգրան Ռոբերտի Թադևոսյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ Տարոն Թադևոսյանի գույքային դրությունը, այդ թվում նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. Տարոն Թադևոսյանի Հայտարարագրում հայտարարագրված չեն վերջինիս համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, [REDACTED] հասցեում գտնվող թվով 2 հողամասերը (ընդհանուր՝ 3,810 քմ),

2. Տարոն Թադևոսյանը և նրա եղբայրը՝ Տիգրան Թադևոսյանը, 2021 թվականի հունիսի 11-ին ձեռք են բերել ք. Երևան, [REDACTED] [REDACTED] հասցեում կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունք, գնման իրավունքի գնից 2,620,429 ՀՀ դրամը վճարվել է որպես կանխավճար, իսկ մնացած մասը՝ վարկային միջոցների ներգրավմամբ, մինչդեռ Տարոն Թադևոսյանը Հայտարարագրում հանձնված փոխառություններ չի հայտարարագրել 26,198,429 ՀՀ դրամի չափով գումարը:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մարտի 26-ին Տարոն Թադևոսյանին հասցեագրել է թիվ 01/1217-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:30-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11:30-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Տարոն Թադևոսյանը ստացել է 2025 թվականի մարտի 29-ին (հիմք՝ AL0127223712AM ծանուցագիր):

1.3 Տարոն Թադևոսյանը 2025 թվականի մարտի 28-ին միջնորդություն է ներկայացրել Հանձնաժողով, որով խնդրել է գործի քննությունը նշանակել ապրիլի 18-ից 27-ը ընկած ժամանակահատվածում՝ ցանկացած օր և ժամի: Միջնորդությունը բավարարվել է և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու օր է նշանակվել ապրիլի 18-ին, ժամը 15:00-ին, իսկ գործի քննությունը՝ 2025 թվականի ապրիլի 20-ին, ժամը 11:00-ին:

1.4 2025 թվականի ապրիլի 18-ին պատշաճ ծանուցված Տարոն Թադևոսյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 63/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Տարոն Թադևոսյանը 2025 թվականի ապրիլի 21-ին միջնորդություն է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով գործի քննությունը տեղափոխել ապրիլի 25-ին ցանկացած ժամի: Միջնորդությունը բավարարվել է և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օր է նշանակվել 2025 թվականի ապրիլի 25-ին, ժամը 15:30-ին:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տարոն Թադևոսյանի ներկայությամբ 2025 թվականի ապրիլի 25-ին, ժամը՝ 15:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Տարոն Թադևոսյանը 2025 թվականի ապրիլի 18-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ բացատրություն.. «(...) ես, եղբայրս՝ Տիգրան Թադևոսյանը և մայրս Սոֆյա Հակոբյանը որևէ տեղեկություն չենք ունեցել Լոռու մարզի [REDACTED] տարածքում գտնվող մեզ համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասերի մասին, որպեսզի դրանց մասին նշեինք հայտարարագրում: Նշեմ, որ այդ հողամասերը մեր ընտանիքի բոլոր անդամների սեփականությունն են դարձել 13.06.1991թ.-ին հողային

բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 8 որոշումով, ես այդ ժամանակ եղել եմ 2 տարեկան, ներկայացնում եմ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկանքը: Ավելին՝ ես, մայրս և եղբայրս 2010թ.-ից մշտապես բնակվում ենք Վանաձոր քաղաքում, ներկայացնում եմ դրա վերաբերյալ Վանաձորի «Էրեբունի» համատիրությունից և Արևաշող գյուղից ստացված տեղեկանքները: Այդ հողամասերը երբեք մեր կողմից չի մշակվել, ավելին՝ դրանց վերաբերյալ հարկեր վճարել է միայն հայրս՝ Ռոբերտ Թադևոսյանը, ներկայացնում եմ նաև դրա վերաբերյալ Արևաշող համայնքի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքները (...): Հայրս մահացել է 2014 թ.-ի փետրվարի 24-ին և նրա մահից հետո նույնիսկ որևէ մեկս չենք դիմել ժառանգություն ընդունելու համար, որը ևս վկայում է հողամասերի մասին չիմանալու վերաբերյալ: Ներկայացնում եմ նոտարական գրասենյակից ստացված գրության պատճենը, որ երբեք չենք դիմել: (...) Ինչ վերաբերվում է վարկի գումարը նաև փոխառություններ բաժնում չնշելու մասին, ապա այդ մասին, նույնիսկ մնացորդով նշել ենք բոլորիս բոլոր հայտարարագրերում, ուղղակի չեմ մտածել, որ դա նաև փոխառություն է: (...):»:

Նշված բացատրությանը նույնաբովանդակ պարզաբանում Տարոն Թադևոսյանը ներկայացրել է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/123/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Տարոն Թադևոսյանը հանդիսանում է հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Տարոն Թադևոսյանին և համատեղ բնակվող անձանց՝ Սոֆյա Հակոբյանին և Տիգրան Թադևոսյանին, համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Լոռու մարզ, [REDACTED] հասցեում

գտնվող թվով 2 հողամաս (ընդհանուր՝ 3,810 քմ), մինչդեռ նշված հողամասերը հայտարարագրված չեն Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում:

3.3 Կադաստրի կոմիտեի կողմից 07.04.2025թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Մարզ Լոռի, [REDACTED] հասցեում Տարոն Ռոբերտի Թադևոսյանի անվամբ առկա է գրանցված 2 միավոր անշարժ գույք, որոնց մակերեսները կազմում են 0.274հա և 0.107հա, նշված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար հիմք է հանդիսացել հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 13.06.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը:

3.4 Ք.Վանաձոր «Էրեբունի» համատիրության նախագահի կողմից 03.04.2025թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Տարոն Թադևոսյանը 2010 թվականից մշտապես բնակվում է [REDACTED] հասցեում:

3.5 Լոռու մարզի, Սպիտակ համայնքի, Արևաշող բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 07.04.2025թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Լոռու մարզի, [REDACTED] [REDACTED] հասցեի բնակիչ Տարոն Ռոբերտի Թադևոսյանը, ծնվ. 24.03.1989թ.-ին 2010 թվականից մոր և եղբոր հետ միասին բացակայում է բնակավայրից: Նրանց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող թվով երկու հողամասերի՝ 0,107 հա տնամերձ հողամասի և 0,274 հա անջրդի վարելահողի հողի հարկի և գույքահարկի պարտավորությունները մարել է Տարոն Թադևոսյանի հայրը՝ Ռոբերտ Թադևոսյանը:

3.6 ՀՀ ԱՆ «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտարի 02.04.2025թ. թիվ 362 գրության համաձայն՝ ԱԵՆԻՍ Էլեկտրոնային համակարգի ժառանգական գործերի շտեմարանի համաձայն Ռոբերտ Լևոնի Թադևոսյանի մահից հետո ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումներ, ժառանգության իրավունքի վկայագրեր չեն տրվել:

3.7 Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.09.2011թ. վճռով Սոֆյա Հակոբյանի հայցը ընդդեմ Ռոբերտ Թադևոսյանի՝ ամուսնությունը լուծելու թույլտվության պահանջի մասին, ամբողջությամբ բավարարվել է:

3.8 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Տարոն Թադևոսյանը և իր եղբայրը՝ Տիգրան Թադևոսյանը, 2021 թվականի հունիսի 11-ին 26,198,429 ՀՀ դրամով

ծեռք են բերել **ք. Երևան,** [REDACTED]

[REDACTED] հասցեում կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունք, գնման իրավունքի գնից 2,620,429 ՀՀ դրամը վճարվել է որպես կանխավճար, մնացած մասը՝ վարկային միջոցների ներգրավմամբ, մինչդեռ Հայտարարագրում Տարոն Թադևոսյանի կողմից հանձնված փոխառություններ հայտարարագրված չեն:

3.9 Հայտարարագրի «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է **ք. Երևան,** [REDACTED] կառուցվող անշարժ գույքի համար ստացված հիփոթեքային վարկի մնացորդը՝ 21,780,000 ՀՀ դրամ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակալված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հանձնված, վերադարձված փոխառությունը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տիգրան Ռոբերտի Թադևոսյանի ընտանիքի անդամ Տարոն Թադևոսյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ, այն է՝

1. Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում չի հայտարարագրել է համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող Լոռու մարզ, [REDACTED] հասցեում գտնվող թվով 2 հողամասեր (ընդհանուր՝ 3,810 քմ):

2. Տարոն Թադևոսյանը և իր եղբայրը՝ Տիգրան Թադևոսյանը, 2021 թվականի հունիսի 11-ին 26,198,429 ՀՀ դրամով ձեռք են բերել ք. Երևան, [REDACTED] [REDACTED] հասցեում կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունք, գնման իրավունքի գնից 2,620,429 ՀՀ դրամը վճարվել է որպես կանխավճար, մնացած մասը՝ վարկային միջոցների ներգրավմամբ, մինչդեռ Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում հանձնված փոխառություններ հայտարարագրված չեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

1-ին կետում նշված խախտման առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև Տարոն Թադևոսյանը Լոռու մարզ, [REDACTED] հասցեում գտնվող թվով 2 հողամասերը չհայտարարագրելով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ նկատի ունենալով այն, որ Տարոն Թադևոսյանի կողմից ներկայացված պարզաբանումների և դրանք հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինիս կողմից չհայտարարագրված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է 1991 թվականին, երբ Տարոն Թադևոսյանը անչափահաս է եղել (2 տարեկան), նա տեղյակ չի եղել, որ այդ հողամասերը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է իրեն, այդ հողամասերի սեփականության վկայականները նրան չեն տրամադրվել և նա այդ հողամասերն երբեք չի օգտագործել, Հանձնաժողովը գտնում է, որ վերջինիս կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն:

2-րդ կետում նշված խախտման առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Տարոն Թադևոսյանը Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում չի հայտարարագրել ք. Երևան, [REDACTED] [REDACTED] հասցեում կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի համար վճարված 26,198,429 ՀՀ դրամի չափով գումարը, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, մինչդեռ նույն Հայտարարագրի «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է ք. Երևան, [REDACTED] [REDACTED] հասցեում կառուցվող անշարժ գույքի համար ստացված հիփոթեքային վարկի մնացորդը՝ 21,780,000 ՀՀ դրամի չափով գումարը:

Այս առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Տարոն Թադևոսյանի կողմից նույն Հայտարարագրում ք. Երևան, [REDACTED]

_____ հասցեում կառուցվող անշարժ գույքի համար ստացված հիփոթեքային վարկի մնացորդի վերաբերյալ տվյալները ներկայացնելով, ըստ էության բացահայտվել է նշված անշարժ գույքի համար գնման իրավունքի համար վճարված գումարը որպես փոխառություն հանձնված լինելու վերաբերյալ տվյալը, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տիգրան Ռոբերտի Թադևոսյանի ընտանիքի անդամ Տարոն Թադևոսյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տարոն Ռոբերտի Թադևոսյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տարոն Ռոբերտի Թադևոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Տարոն Ռոբերտի Թադևոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ